ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/30 ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի

ք. Երևան «07» մայիսի 2019թ.
ժամը՝ 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝
Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու (ԳՊ/ԳԱՊ)
Գարիկ Բոյաջյան՝ ԱԻՆ փրկարար ծառայության թիկունքի և նյութատեխնիկական ապահովման վարչության պլանավորման, հաշվառման և վերլուծության բաժնի պետ:
Անդամներ՝
Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ(ԳՊ/ԳԱ)
Վարդգես Դադոյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության տնտեսական բաժնի գլխավոր մասնագետ:
Գնման Պատասխանատու/Բացման աշխատակազմ(ԳՊ/ԲԱ)
Հայկ Ծատուրյան՝ ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ,
Գոհար Մեսրոպյան՝ ֆինանսատնտեսագիտական վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ:
Բացակայում է
Արեն Մեսրոպյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման պատասխանատու:
Հանձնաժողովի քարտուղար՝
Անահիտ Եղիազարյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ:

Նիստի ընթացքում Հանձնաժողովի անդամների կողմից քննարկվեց ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկատվությունը և մասնակիցների կողմից ներկայացված՝ առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

«Նորմա-պլյուս», «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ», «Պրոֆիլայն Էռ Էմ» և «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ները հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ չունեն ժամկետանց հարկային պարտավորություններ, ինչպես նաև ներկայացրել են անհրաժեշտ փաստաթղթերը, ուստի Ընկերությունների կողմից ներկայացված հայտարարությունները որակվեցին իրականությանը համապատասխանող:

Հանձնաժողովը որոշեց՝

1) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասը՝ ընտրված մասնակիցներ ճանաչել.
- «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ին՝ 1 և 2 չափաբաժիններով,
- «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ» ՍՊԸ-ին՝ 3,4,5 չափաբաժիններով,
- «Պրոֆիլայն Էռ Էմ» ՍՊԸ-ին՝ 7,10,12 չափաբաժիններով,
- «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ին՝ 6,8,9,11 չափաբաժիններով:

2) Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 5 օրացուցային օր:

3) Հաստատել ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/30 ծածկագրով ԳՀ գնման ընթացակարգի պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

4) Հրավերով սահմանված ժամկետում պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Նորմա-պլյուս», «ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ», «Պրոֆիլայն Էռ Էմ» և «Պատրոն ՌՄ» ՍՊԸ-ներին:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Գ. Բոյաջյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Վ. Դադոյան

_____ Հ. Ծատուրյան

_____ Գ. Մեսրոպյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Ա. Եղիազարյան